Արձանագրություն N 7
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան 19.04.2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Ալոյանը,
Հանձնաժողովի անդամներ Ա. Սիմոնյանը, Ն. Ավետյանը և Տ. Բոյախչյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Նիստի օրակարգի վերաբերյալ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.04.2022թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/28 որոշման դրույթների կատարման վերաբերյալ:

Գնման առարկա է հանդիսանում ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով ընթացակարգի <<Ջրառ>> ՓԲԸ-ի, <<Կոտայք>> ՋՕԸ-ի, <<Սյունիք>> ՋՕԸ-ի և <<Արարատ>> ՋՕԸ-ի սպասարկման տարածքներում ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքների ձեռքբերումը:

Քննարկում և որոշում

Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 08.04.2022թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/28 որոշման դրույթները գնահատող հանձնաժողովը որոշեց.

Դադարեցնել

1. թիվ 5 արձանագրությամբ 2-րդ չափաբաժնի մասով կայացված որոշումները,
2. թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշումները,
3. 1-ին և 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից համարել <<Շին Մոնտաժ Տրանս>> ՍՊԸ և <<Նարսեր Շին>> ՍՊԸ կոնսորցիումին և պայմանագիր կնքելու վերաբերյալ առաջարկ ներկայացնել,
4. 1-ին և 3-րդ չափաբաժնի մասով հրապարակել պայմանագիր կնքելու որոշում,
5. դադարեցնել թիվ 4 արձանագրությանը <<Արազեն հայ-գերմանական ՀՁ>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացրած որոշումը,
6. <<Շին Մոնտաժ Տրանս>> ՍՊԸ և <<Նարսեր Շին>> ՍՊԸ կոնսորցիումին և <<Ֆլորա էներջի>> ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով, <<Շին Մոնտաժ Տրանս>> ՍՊԸ և <<Նարսեր Շին>> ՍՊԸ կոնսորցիումին, <<Արազեն հայ-գերմանական ՀՁ>> ՍՊԸ-ին և <<Արտեզիա>> ՍՊԸ-ին 4-րդ չափաբաժնի մասով հրավիրել միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա 25.04.2022թ. ժամը 11:00-ին:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Նախագահ		Գ. Ալոյան
անդամներ		Ա. Սիմոնյան
		Ն. Ավետյան
		Տ. Բոյախչյան
Քարտուղար		Ա. Սարգսյան